Subjonctif-ը բայի եղանակներից է, որն արտահայտում է ոչ իրական, հնարավոր, հավանական գործողություն: Այն հիմնականում կիրառվում է ստորադասական նախադասություններում՝ **que** շաղկապից հետո, եթե գլխավոր նախադասության բայն արտահայտում է իղձ, ցանկություն, կասկած, հրաման, անհրաժեշտություն և այլն: Subjonctif-ն ունի չորս ժամանակ (**présent, passé, imparfait, plus-que-parfait**), որոնցից գլխավորապես գործածական են **présent**-ը և **passé**-ն, և հիմնականում համապատասխանում է հայերենի ըղձական եղանակին:

Subjonctif présent-ը կազմվում է խոնարհվող բայի սահմանական եղանակի ներկա ժամանակի հոգնակի երրորդ դեմքի հիմքին ավելացնելով **-e, -es, -e, -ions, -iez, -ent** վերջավորությունները:

Ier groupe	**IIe groupe**	**IIIe groupe**
que j'aime	que je finisse	que je parte
que tu aimes	que tu finisses	que tu partes
qu'il aime	qu'il finisse	qu'il parte
que nous aimions	que nous finissions	que nous partions
que vous aimiez	que vous finissiez	que vous partiez
qu'ils aiment	qu'ils finissent	qu'ils partent

Բացառություն են կազմում հետևյալ բայերը. **aller, avoir, être, faire, savoir, vouloir** և այլն (Տե՛ս բայերի խոնարհման աղյուսակը):

Subjonctif-ը գործածվում է՝

I. Անկախ նախադասություններում, 3-րդ դեմքում՝ հրաման, թելադրանք արտահայտելու համար.

Qu'on finisse et **qu'on** parte!

II. Ստորադասական նախադասություններում.

1. Եթե գլխավոր նախադասության բայն արտահայտում է.
   ա) ցանկություն **Je désire** que vous sortiez tout de suite.
   բ) կասկած, վախ **Il doute** que je fasse cette traduction.

2. Եթե գլխավոր նախադասության մեջ **affirmer**, **croire, être certain, être sûr, penser, trouver** բայերը կիրառվում են հարցական կամ ժխտական ձևերով.

Pensez-vous qu'il soit malade?

Je **ne crois pas** qu'il vienne nous voir.

3. Եթե գլխավոր նախադասության բայն անդեմ է:

Օրինակ՝ Il faut, il est possible, il est nécessaire, il est peu probable, il est douteux, il est naturel.

Il faut que tu viennes chez nous.

4. Եթե գլխավոր նախադասության մեջ կիրառված են զգացմունք արտահայտող **être content, être mécontent, être heureux, être fier, être triste, être étonné** և այլ բայական կապակցությունները:

Je suis triste que tu partes sans nous.

5. Եթե ստորադասական նախադասությունները սկսվում են հետևյալ շաղկապներով՝ **pour que, afin que, bien que, à condition que, jusqu'à ce que, de peur que** և այլն:

Il travaille **pour que** ses parents soient contents.

Nous attendrons au bord de la rivière **jusqu'à ce que** le bateau revienne.

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ SYNTAXE

§ 16. ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ
PHRASE SIMPLE

Ֆրանսերենում պարզ նախադասությունները կազմված են գլխավոր և երկրորդական անդամներից:

Նախադասության գլխավոր անդամներն են՝ **ենթական** (sujet) և **ստորոգյալը** (prédicat):

Նախադասության երկրորդական անդամներն են՝ **ուղիղ խնդիրը** (complément d'objet direct), **անուղղակի խնդիրը** (complément d'objet indirect) և **պարագաները** (compléments circonstanciels).

Պարզ նախադասության գլխավոր անդամներ
Termes essentiels de la proposition simple
Ենթակա Sujet

Ենթական նախադասության այն գլխավոր անդամն է, որը, բացի մի քանի հատուկ դեպքերից, դրվում է ստորոգյալից առաջ և պատասխանում **qui?, qui est-ce qui** (ո՞վ, ովքե՞ր) և **qu'est-ce qui** (ի՞նչը, ինչե՞րը) հարցերին, որոնցից հետո ստորոգյալը դրվում է եզակի թվի 3-րդ դեմքով:

Les enfants vont à l'école. Qui va à l'école?

Les étoiles brillent dans le ciel? Qu'est-ce qui brille dans le ciel?

Ենթական ֆրանսերենում կարող է արտահայտվել.

1. գոյականով – **La rivière** coule.
2. դերանուններով.

ա. անձնական – **Nous** attendons le train**.**

բ. ցուցական – **Ce** n'est pas clair.

գ. հարցական – **Qui** m'appelle?

դ. անորոշ – **Tout** était calme.

3. անորոշ դերբայով – **Vouloir** c'est pouvoir.
4. թվականներով – **Deux et deux** font quatre.

Ստորոգյալ Prédicat

Ստորոգյալը ֆրանսերենում արտահայտում է ենթակային վերագրվող գործողություն, վիճակ, հատկանիշ: Այն սովորաբար դրվում է ենթակայից հետո:

Ստորոգյալը ֆրանսերենում կարող է արտահայտվել՝ խոնարհված բայով՝ պարզ ստորոգյալ **(prédicat verbal),** հանգույցով և այլ խոսքի մասերով՝ բաղադրյալ ստորոգյալ **(prédicat nominal**).

Les arbres **fleurissent**. Il **est médecin**.

Բաղադրյալ ստորոգյալի հանգույցը **(copule)** արտահայտվում է գլխավորապես **être** կամ **devenir, sembler, rester, paraître** և այլ բայերի խոնարհված ձևերով:
Mon père est (semble, paraît) malade.

Ստորոգելիական վերադիրը կարող է արտահայտվել.

1. ածականով
Les fleurs du pommier sont **blanches.**

2. գոյականով (հոդով կամ առանց հոդի)
Il est **pêcheur** (ouvrier, peintre).
Il est **un bon pêcheur** (un bon peintre, un bon ouvrier).

3. դերանվամբ
C'est **toi.**

4. մակբայով
C'est **bien.**

5. թվականով
Nous sommes **dix.**

Ծանոթություն. Ի հակադրություն հայերենի, ստորոգելիական վերադիրը ֆրանսերենում դրվում է միշտ հանգույցից հետո և համաձայնում թվով և սեռով ենթակայի հետ:

Les fleurs des pêchers sont **roses.**

Պարզ նախադասության երկրորդական անդամներ
Termes secondaires de la proposition simple

Ֆրանսերենում նախադասության երկրորդական անդամներն են խնդիրներն ու պարագաները, որոնք լրացնում են ստորոգյալին:

Խնդիրները լինում են ուղիղ (**complément d'objet direct**) և անուղղակի (**complément d'objet indirect**):

Ֆրանսերենում ուղիղ խնդիրը դրվում է անմիջապես ստորոգյալից հետո, որին միանում է առանց նախդիրների, և պատասխանում է **qui?** (ո՞ւմ), **qui est-ce que?** (ո՞ւմ), **que?** (ի՞նչ), **qu'est-ce que?** (ի՞նչ) հարցերին:

1. Ուղիղ խնդիրը կարող է արտահայտվել.

ա) գոյականով
Les touristes admirent **la forêt.**
Marie a invité **ses amis** à son anniversaire.

բ) անորոշ դերբայով
Il veut **travailler** la nuit.

գ) անձնական, հարցական, հարաբերական դերանուններով, ինչպես նաև խնդիր երկրորդական նախադասությամբ:

Il prend son livre, **l**'ouvre, et **le** lit.

Que mangez-vous? **Qui** invitez-vous?

Il y a des villes **qu'**on visite beaucoup.

Je sais que **tu travailles bien.**

Անուղղակի խնդիր Complément d'objet indirect

Անուղղակի խնդիրը ստորոգյալին է միանում նախդիրներով՝ **à, de, sur, par, pour** և այլն: Այն կարող է արտահայտվել.

ա) գոյականով

Il a téléphoné **à Jean.**

բ) դերանուններով

Je **lui** ai prêté mon dictionnaire.

Պարագաներ Compléments circonstanciels

Պարագաները նախադասության մեջ ցույց են տալիս գործողության կամ եղելության հանգամանքներն ու հատկանիշները: Տարբերում են տեղի, ժամանակի, պատճառի, պայմանի, ձևի, նպատակի, չափ ու քանակի և այլ պարագաներ:

Պարագաների տեղը նախադասության մեջ համեմատաբար ազատ է: Այն կախված է նախադասության հնչերանգից, տրամաբանական շեշտից և այլ գործոններից:

Տեղի պարագան (**complément circonstanciel de lieu**) ցույց է տալիս գործողության կամ եղելության տեղը և պատասխանում է **où?, d'où?, par où?** հարցերին:

Nous allons passer nos vacances **en montagne**.

Ժամանակի պարագան (**complément circonstanciel de temps**) ցույց է տալիս գործողության կատարման կամ եղելության ժամանակը և պատասխանում **quand?, depuis quand?** հարցերին:

Le muguet fleurit **en mai.**

Depuis son départ nous sommes sans nouvelles.

Պատճառի պարագան (**complément circonstanciel de cause**) ցույց է տալիս գործողության կատարման կամ եղելության պատճառը և պատասխանում է **pourquoi?, à cause de quoi?** հարցերին:

À cause du mauvais temps ils sont restés à la maison.

Զիջման (հակառակ հիմունքի) պարագան **(Complément circonstanciel de concession)** ցույց է տալիս, որ գործողությունը կատարվում է հակառակ այս կամ այն պատճառի, հիմունքի, պայմանի և պատասխանում է **malgré quoi?** հարցին:

Malgré sa richesse elle était triste.

Նպատակի պարագան (**Complément circonstanciel de but**) ցույց է տալիս գործողության կատարման կամ եղելության նպատակը և պատասխանում **pour quel but?, pourquoi?, dans quel but?** հարցերին:

Il était venu **pour m'annoncer la bonne nouvelle.**

Ձևի պարագան **(Complément circonstanciel de manière)** ցույց է տալիս գործողության կատարման ձևը և պատասխանում **comment**? հարցին:

Il marchait **lentement.**

Չափի ու քանակի պարագան (**Complément circonstanciel de quantité ou de mesure**) ցույց է տալիս գործողության կամ եղելության չափը կամ քանակը և պատասխանում **combien?** հարցին:

Il fait **beaucoup** d'exercices de phonétique.

Պայմանի պարագան (**Complément circonstanciel de condition)** ցույց է տալիս գործողության կամ եղելության պայմանը և պատասխանում **à quelle condition?** հարցին:

C'est bien d'aller à la campagne **à condition de ne pas rester à la maison toute la journée.**

§ 17. ՄԻԱԿԱԶՄ ԵՎ ԵՐԿԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ
PHRASES À UN TERME ET À DEUX TERMES

Ըստ կառուցվածքի ֆրանսերենում նախադասությունները լինում են՝ **միակազմ** և **երկկազմ**:

ա) Միակազմ նախադասությունները կազմված են գլխավոր անդամից: Վերջինս կարող է ընդարձակվել՝ ընդունելով լրացումներ:

Une promenade! Une simple promenade? Sors! Sors d'ici!

բ) Երկկազմ նախադասությունները կազմված են գլխավոր անդամներից՝ ենթակա, ստորոգյալ: Վերջիններս կարող են ընդարձակվել՝ ընդունելով լրացումներ:

Les feuilles tombent.

Les feuilles des arbres tombent une à une par terre.

Միակազմ նախադասությունները լինում են **անվանական** և **բայական**:

Անվանական միակազմ նախադասություններ

Անվանական միակազմ նախադասությունների գլխավոր անդամը արտահայտվում է գոյականով, ածականով, դերանունով, մակբայով, թվականով, ձայնարկությամբ և այլն:

Silence! Paresseux. Vite, Hélas! Dix.

Անվանական նախադասությունները լինում են՝

ա) Պատմողական (informatives). Les résultats des examens.

բ) Հարցական (interrogatives). Ma mère? Une femme admirable? Quoi de nouveau?

գ) Հրամայական (impératives). Stop! Attention! À la porte!

դ) Բացականչական (exclamatives). Pas possible! Magnifique! Quel dommage!

ե) Ժխտական (négatives). Pas du tout! Non.

Միակազմ անվանական նախադասությունները գործածվում են.

1. Վերնագրերում.

«Souvenirs d'enfance» (titre du roman de M. Pagnol).

«Maison à vendre» (titre du récit d' A. Daudet).

2. Պիտակներում, ցուցանակներում, ավտոճանապարհային ազդանշաններում, դեղատոմսերում, հրահանգներում, բաղադրատոմսերում, գովազդներում.

Magie noire. Défense de fumer. Un comprimé le soir. Oranges d'Espagne.

3. Ասացվածքներում, առածներում.

Tel père, tel fils. À bon chat bon rat.

4. Հեռագրերում.

«Arrive demain soir. Train N 17. Mille baisers, Marie».

5. **Voici, voilà** բառերից հետո.

Voici des fruits, des fleurs, des feuilles et des branches. Et puis voici mon cœur (Verlaine).

6. Ողջույնի, հրաժեշտի, շնորհակալական, ներողության արտահայտություններում.

Bonjour. Bonsoir. Pardon. Merci. Bonne chance! Adieu!

Բայական միակազմ նախադասություններ

Բայական միակազմ նախադասության գլխավոր անդամը արտահայտվում է բայի դիմավոր ձևով կամ անորոշ դերբայով:

Բայական միակազմ նախադասությունները գործածվում են.

1. Հրամայական նախադասություններում.

Taisez-vous! N'en parlons pas!

2. Անորոշ դերբայով արտահայտված նախադասություններում.

Que faire? Où aller? Mais quoi manger?

3. Ցուցանակներում.

Ne pas se pencher au dehors!

4. Հրահանգներում, բաղադրատոմսերում.

Sauce tomate: Éplucher des tomates, les couper dans une casserole, les faire cuire cinq minutes, les écraser.

Agiter avant l'utilisation.

Ne pas secouer.

5. Հեռագրերում.

«Impossible venir Grenoble. Imprévu dernière minute. Prière m'excuser. Je vous embrasse. Marie».

6. Հայտարարություններում.

À louer dans un immeuble moderne 3 pièces.

Ծանոթություն. Հայտարարություններում հոդեր և նախդիրներ չեն գործածվում: Բայերը օգտագործվում են առանց ենթակա դերանունների:

Լայն գործածություն ունեն հապավումները:

Loue (une) belle maison tt (tout) conf (confort), 5 p. (pièces), s. (salle) de bains, cuis. (cuisine) mod. (moderne), gd. (grand), séj. (séjour), ch. (chambre), ter. (terrasse), 2 gar. (garages). Écrire B. P. (Boîte Postale) 527.

§ 18. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԲՆՈՒՅԹԻ

Ըստ բնույթի՝ ֆրանսերենի նախադասությունները լինում են.

ա) պատմողական (informative). Le soir ils vont au cinéma.

բ) հարցական (interrogative). D'où viens-tu, mon petit?

գ) հրամայական (impérative). Taisez-vous et écoutez-moi!

դ) բացականչական (exclamative). Quelle belle journée!

Պատմողական նախադասություն Phrase informative

Պատմողական նախադասությունները որևէ իրողություն են հաղորդում խոսակցին:

Mon grand-père était tailleur de pierre.

Ֆրանսերենում պատմողական նախադասությունների ամենատարածված տեսակներն ունեն հետևյալ կաղապարները.

Groupe nominal		Groupe verbal
Անվանական խումբ	+	Բայական խումբ

Le soleil + réchauffait doucement la campagne.

La figure de cette jeune fille + devint triste.

§ 19. ԱՆՎԱՆԱԿԱՆ ԽՈՒՄԲ GROUPE NOMINAL

Ֆրանսերենում անվանական խմբի գլխավոր անդամը՝ միջուկը (le noyau), գոյականն է: Անկախ գործառությունից նախադասության մեջ այն կարող է կիրառվել հետևյալ բառերի հետ:

1. Որոշիչ, անորոշ, մասնական հոդեր.
la lumière, le ciel, l'eau, du vin, de l'eau fraîche, de la viande.
2. Ցուցական, ստացական և անորոշ դերանվանական ածականներ.
cette nuit, ses yeux, quelques amis, aucun bruit, tous les enfants.
3. Ածական որոշիչ.
un roman historique, ses yeux noirs.
4. Թվականներ.
les trois amis, mon premier livre, deux hirondelles.
5. Նախդրավոր գոյականներ.
ա) Նախդիրից հետո ստորադաս գոյականը կարող է գործածվել հոդերով, ցուցական, ստացական, դերանվանական ածականներով.
la réponse **du petit garçon;** la voiture **de mon oncle;** le chien **du berger.**
բ) Նախդիրից հետո ստորադաս գոյականը կարող է հանդես գալ նաև առանց հոդի.
les yeux **d'enfant;** mes souvenirs **d'enfance;** un ami **d'école;** une maison **de campagne;** un agent **de police;** coiffeur **pour dame.**
6. Աննախդիր գոյականներ.
des cheveux **argent** (արծաթագույն մազեր)

Ծանոթություն. ա) անվանական խմբի նախդրավոր կամ աննախդիր ստորադաս բառը կարող է հեշտությամբ փոխարինվել համապատասխան ածականով:
une maladie de cœur → une maladie cardiaque – սրտային հիվանդություն
l'art du théâtre → l'art théâtral – թատերական արվեստ
l'amour du père → l'amour paternel – հայրական սեր
les livres pour enfants → les livres enfantins – մանկական գրքեր

բ) Ֆրանսերենում քաղաքների անունները (Paris, Erévan), անձնանունները (Marie, Anahit), ի հակադրություն հայերենի, հոդ չեն առնում, հոդ ստանում են միայն ածական-որոշիչի հետ գործածվելիս.
le vieux Paris – հին Փարիզը
le petit Pierre – փոքրիկ Պիեռը
Բացառություն են կազմում հետևյալ քաղաքների անունները.
Le Caire, Le Havre, la Rochelle

գ) Ի հակադրություն հայերենի՝ ֆրանսերենում **ce, cet, cette, ces** ցուցական, **mon, ton, son** և այլ ստացական դերանվանական ածականների հետ գոյականը գործածվում է առանց հոդի.

cet arbre – **այս** ծառ**ը**

mon père – **իմ** հայր**ը**.

§ 20. ԱՆՎԱՆԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ ԵՎ ԱԾԱԿԱՆ-ՈՐՈՇԻՉԸ

Ժամանակակից ֆրանսերենում առաջադաս են՝

ա) beau, bon, grand, gros, jeune, long, mauvais, nouveau, petit, vieux ածականները.

Ma petite sœur, mon jeune ami, une mauvaise rencontre.

բ) դասական թվականները.

première leçon; troisième étage.

ետադաս են՝

ա) գույն, ֆիզիկական արատ, ձև ցույց տվող ածականները.

un toit rouge, une table ronde, un homme sourd (խուլ մարդ)

բ) հարաբերական ածականները.

le peuple français, l'art arménien.

գ) բազմավանկ ածականները.

un livre intéressant, une élève intelligente.

Ծանոթություն. Cher, grand, brave, maigre, propre, méchant, pauvre, seul, ancien և այլ ածականները փոխում են իրենց իմաստը ըստ շարադասության՝ առաջադաս և հետադաս.

un grand homme – մեծ, նշանավոր մարդ	un homme grand – բարձրահասակ մարդ
un livre cher – թանկ գիրք	mon cher ami – սիրելի, թանկագին բարեկամ
un homme pauvre – աղքատ մարդ	un pauvre homme – խեղճ մարդ
un enfant maigre – նիհար երեխա	un maigre dîner – աղքատիկ ճաշ
un homme brave – քաջ մարդ	un brave homme – ազնիվ մարդ
une maison ancienne – հին տուն	l'ancienne maison – նախկին տունը
des draps propres – մաքուր սավաններ	mes propres draps – իմ սեփական սավանները
un homme seul – միայնակ մարդ	un seul homme – մենակ մի մարդ

§ 21. ԲԱՅԱԿԱՆ ԽՈՒՄԲ GROUPE VERBAL

Ֆրանսերենում բայական խմբի գլխավոր անդամը՝ միջուկը, դիմավոր բայն է:

Ստորադաս բառը կարող է արտահայտվել.

ա) գոյականական խմբով՝ ուղիղ խնդիր (complément d'objet direct), անուղղակի խնդիր (complément d'objet indirect), պարագաներ (compléments circonstanciels).

Mon frère + écrivait **de longues lettres à ses amis**.

Je + partirai **à la campagne avec mes parents.**

բ) մակբայով.

Mon chien Médor + dormait **paisiblement**.

Ծանոթություն. 1. Ուղիղ խնդրի դերում հանդես եկող գոյականական խմբերը կարող են փոխարինվել **le, la, les, en** դերանուններով:

ա) **le, la, les** անշեշտ անձնական դերանունները փոխարինում են որոշիչ հոդերով, ցուցական, ստացական, դերանվանական ածականներով գործածված գոյականական խմբերը.

Le chat regardait **la souris.** Le chat **la** regardait.

Connaissez-vous **mon voisin?** Oui, je **le** connais.

Qui est **cet homme?** Nous ne **l'**avons pas invité.

բ) **en**-ը փոխարինում է անորոշ, մասնական հոդերով, **de** նախդիրով, չափ ու քանակ ցույց տվող մակբայներով կազմված գոյականական խմբերը:

Voulez-vous **du fromage?** J'**en** ai acheté beaucoup.

2. Անուղղակի խնդրի դերով հանդես եկող գոյականական խումբը փոխարինվում է **lui, leur, y, en** դերանուններով .

ա) **à** նախդիրով ձևավորված շնչավոր անուղղակի խնդիրները փոխարինվում են **lui, leur,** իսկ անշունչ անուղղակի խնդիրները՝ **y** դերանուններով:

Il donne des bonbons **à ses amis.** Il **leur** donne des bonbons.

J'explique la leçon **à mon frère.** Je **lui** explique sa leçon.

Je pense **à mon travail.** J'**y** pense.

բ) **de** նախդիրով նախորդված անուղղակի խնդիրները փոխարինվում են **en**-ով:

Le maître est content **du travail de ses élèves.**

Le maître **en** est content.

3. Տեղի պարագայի դերով հանդես եկող գոյականական խմբերը փոխարինվում են **en** և **y** մակբայներով:

ա) **de** նախդիրով տեղի պարագան փոխարինվում է **en**-ով:

Quand revenez-vous **de Paris?** Nous **en** revenons dans un mois.

բ) **à, dans, sous, sur** և այլ նախդիրներով նախորդված տեղի պարագան փոխարինվում է **y**-ով:

Combien de jours êtes-vous restés **à Paris?**

Nous **y** sommes restés deux semaines.

§ 22. ՀԱՐՑԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ
PROPOSITIONS INTERROGATIVES

Ֆրանսերենի հարցական նախադասություններում տարբերում են հարցման երկու տեսակ՝ ընդհանուր հարցում (**interrogation totale**) և մասնակի հարցում (**interrogation partielle**):

Ընդհանուր հարցում Interrogation totale

Ընդհանուր հարցման դեպքում հարցումն ընկնում է նախադասության ստորոգյալի վրա՝ հարցման տակ առնելով ամբողջ նախադասությունը: Այն արտահայտվում է.

ա) հնչերանգով, որը հատուկ է խոսակցական ֆրանսերենին.
Tu vas à la campagne?

բ) **est-ce que**-ով, որը դրվում է նախադասության սկզբում: Հարցման այս միջոցը նույնպես հատուկ է խոսակցական ֆրանսերենին.
Est-ce que Paul vient? Est-ce que Paul ne vient pas?
Est-ce que tu vas à la campagne? Est-ce que tu ne vas pas à la campagne?

գ) շրջադարձմամբ՝ պարզ և բարդ.
Պարզ շրջադարձում է կատարվում, եթե նախադասության ենթական արտահայտված է **tu, il, elle, nous, vous, ils, elles** անձնական, **ce** ցուցական և **on** անորոշ դերանուններով:

Viens-tu chez Jules? Voulez-vous du café?
Sera-t-il malade? Se promène-t-on en voiture?

Բարդ շրջադարձում է կատարվում, եթե ենթական արտահայտվում է գոյականով: Այն մնում է իր տեղում՝ ստորոգյալից առաջ, իսկ ստորոգյալից հետո դրվում է գոյական-ենթակային համապատասխան 3-րդ դեմքի անձնական դերանունը:
Jules va-t-il à la campagne?
Les fenêtres sont-elles ouvertes?

դ) **Je** դերանունը շրջադարձվում է **aller, avoir, dire, être, faire, devoir, pouvoir, savoir** բայերի սահմանական եղանակի ներկա ժամանակում:
Vais-je? ai-je? dis-je? dois-je? fais-je? puis-je? sais-je?
Մնացած բայերի հետ գործածվում է **est-ce que** ձևը:
Est-ce que je m'intéresse à la peinture?

Ընդհանուր հարցման հնարավոր պատասխաններն են՝ **oui, non** և **si**-ն:
Oui-ն գործածվում է նախադասության դրական պատասխանի, իսկ **non**-ը՝ ժխտականի դեպքում:

դրական պատասխան
– Oui, je la comprends.

Comprenez-vous ma question?

ժխտական պատասխան
– Non, je ne la comprends pas.

Si-ն գործածվում է որպես հարցաժխտական նախադասության դրական պատասխան՝ **oui**-ի փոխարեն:

դրական պատասխան
– Si, nous y allons.

N'allez-vous pas au cinéma?

ժխտական պատասխան
– Non, nous n'y allons pas.

§ 23. ՄԱՍՆԱԿԻ ՀԱՐՑՈՒՄ
INTERROGATION PARTIELLE

Մասնակի հարցման դեպքում հարցման տակ է առնվում նախադասության այն անդամը (ենթակա, խնդիր, պարագա), որի վրա է ընկնում հարցումը:

ա) Ենթակային տրվող հարցեր (տե՛ս §16):

բ) Որոշչին և ստորոգելիական վերադիրին տրվում է **quel** հարցը, օր.՝ Quel film aimez-vous? Quelle est votre profession?

գ) Ուղիղ խնդրին տրվող հարցեր (տե՛ս §16):

դ) Անուղղակի խնդրին և պարագային տրվող հարցեր (տե՛ս §16):

§ 24. ԺԽՏԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ
PHRASES NÉGATIVES

Ֆրանսերենում ժխտական նախադասությունների կառուցվածքային բնորոշ հատկանիշը **ne** և **pas** ժխտական մակբայների առկայությունն է:

ա) Պարզ ժամանակներում **ne**-ն դրվում է ստորոգյալից առաջ, իսկ **pas**-ն՝ հետո:

Elle se dépêche. → Elle ne se dépêche pas.

Elle part. → Elle ne part pas.

բ) Բաղադրյալ ժամանակներում **ne**-ն դրվում է օժանդակ բայից առաջ, իսկ **pas**-ն՝ հետո:

Elle est partie. → Elle n'est pas partie.

գ) Անորոշ դերբայը ժխտելիս ժխտական երկու մակբայներն էլ դրվում են անորոշ դերբայից առաջ:

Ne pas fumer.

դ) **Pas**-ի փոխարեն որպես 2-րդ բաղադրիչ կարող են հանդես գալ՝ **jamais, plus** և այլ ժխտական մակբայները.

Je **ne** l'ai **jamais** vu.

Marie **ne** l'aime **plus**.

Aucun, nul և այլ անորոշ դերանվանական ածականները.

Il **n'**a fait **aucune** faute. Je **ne** vais **nulle** part.

Personne, rien և այլ անորոշ դերանունները.

Je **ne** vois **personne**. Tu **ne** fais **rien**.

Ծանոթություն. **Plus, jamais, rien, personne** բառերը կարող են կապակցվել միմյանց հետ.

plus jamais, plus personne, jamais rien, jamais personne.

Je ne l'ai plus jamais vu. Il n'oublie jamais rien.

Ni...ni ժխտական շաղկապը գործածվում է նախադասության բազմակի ենթակաները, խնդիրներն ու պարագաները ժխտելու համար:

Il n'a ni père ni mère.

ե) Ֆրանսերենում ժխտումը կարող է արտահայտվել նաև **non, pas du tout, point, du tout** ժխտական միակազմ նախադասություններով:

Vous aimez les cigarettes? Non.

Êtes-vous content? Pas du tout.

Ծանոթություն. Խոսակցական ֆրանսերենում հաճախ **ne**-ն չի գործածվում:

§ 25. ԽՆԴԻՐ ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ա) Անշեշտ խնդիր անձնական դերանունները (**me, te, le, la, lui, nous, vous, les, leur**) դրվում են ստորոգյալից հետո՝ միայն հրամայական նախադասություններում, ընդ որում **me** և **te**-ի փոխարեն համապատասխանաբար օգտագործվում են **moi, toi** շեշտված ձևերը:

Tu **te** lèves très tôt . → Lève-**toi** très tôt!

բ) Ժխտական հրամայական նախադասություններում այդ դերանունները դրվում են ստորոգյալից առաջ, իսկ **moi** և **toi**-ի փոխարեն օգտագործվում են **me, te** անշեշտ ձևերը:

Lève-**toi** . → Ne **te** lève pas!

գ) Հրամայական եղանակի հաստատական նախադասություններում անշեշտ ուղիղ խնդիր դերանունները դրվում են անուղղակի խնդիր դերանուններից առաջ:

Donne-**le-moi**! Apporte-**la-nous**! Achète-**les-leur**!

դ) Ժխտական հրամայական նախադասություններում, եթե այդ դերանունները տարբեր դեմքի են, 1-ին և 2-րդ դեմքերի անուղղակի խնդիր դերանունները (**me, te, nous, vous**) դրվում են 3-րդ դեմքի ուղիղ խնդիր (**le, la, les**) դերանուններից առաջ:

Ne **me le** donne pas! Ne **nous les** achetez pas!

Իսկ եթե այդ դերանունները 3-րդ դեմքի են՝ նախ դրվում են ուղիղ խնդիր դերանունները, ապա անուղղակի խնդիր դերանունները՝

Ne **le lui** donne pas.

En և y դերանունների շարադասությունը հրամայական նախադասություններում

En և **y** դերանունները դրվում են անմիջապես ստորոգյալից հետո: Այդ դեպքում 1-ին խմբի, ինչպես նաև 3-րդ խմբի **aller, envoyer, cueillir, ouvrir, couvrir, offrir** և այլ բայերի եզակի թվի 2-րդ դեմքի **s**-ը պահպանվում է:

Manges-en!

Moi, **toi** դերանունները **en**-ի հետ գործածվելիս ընդունում են **m'**, **t'** անշեշտ ձևերը:

Donne-**m'en**! Achète-**m'en**! Va-**t'en**!

En-ը և **y**-ն ժխտական հրամայական նախադասություններում դրվում են ստորոգյալից առաջ, անձնական դերանուններից հետո:

Ne **m'en** achète pas! **N'y** pensons plus!

Ne **lui en** achète pas!

§ 26. ՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՆՈՒՂՂԱԿԻԻ TRANSFORMATION DU DISCOURS DIRECT EN DISCOURS INDIRECT

Ուղղակի խոսքից անուղղակիի փոխակերպման ժամանակ կատարվում են հետևյալ փոփոխությունները.

1. Անուղղակի (մեջբերվող) խոսքը միանում է հեղինակի խոսքին (գլխավոր նախադասությանը) **que** (որ) շաղկապով:

1. Maman ajoute: «Les nuages sont merveilleux».	Maman ajoute que les nuages sont merveilleux.

2. – Tu as bien raison, me dit Michel. Michel me dit que j'ai bien raison.
3. Il dit: «J'irai consulter le médecin». Il dit qu'il ira consulter le médecin.

2. Ընդհանուր հարցում արտահայտող նախադասությունները անուղղակի խոսքում մեջ են բերվում **si** (թե, թե արդյոք) շաղկապով:

Il me demande: «Partez-vous?» Il me demande si je pars.
Je veux savoir: «Souffre-t-il?» Je veux savoir s'il souffre.

3. **Quand**, **comment**, **quel**, **lequel**, **qui**, **où**, **pourquoi** և այլ հարցական բառերով մասնակի հարցում արտահայտող նախադասությունները փոխակերպվում են առանց շրջադարձման, միանում են գլխավոր նախադասությանը նույն հարցական բառերով:

Notre hôte nous demande:
– Qui êtes-vous et où allez-vous?
Notre hôte nous demande qui nous sommes et où nous allons.

Que (qu'est-ce que) հարցական դերանունը անուղղակի խոսքում փոխվում է **ce que**-ի:

Que cherchez-vous? Je vous demande **ce que** vous cherchez.
Qu'est-ce que vous lisez? Dites-moi **ce que** vous lisez.

Qu'est-ce qui հարցական դերանունը անուղղակի խոսքում փոխվում է **ce qui**-ի:

Qu'est-ce qui vous intéresse? Je veux savoir **ce qui** vous intéresse.

4. Հրամայական նախադասությունները անուղղակի խոսքի փոխակերպվելիս ներմուծվում են **de** նախդիրով, իսկ հրամայական եղանակով գործածված բայը դրվում է անորոշ դերբայով:

Le médecin me dit: Le médecin me dit **de garder** le lit.
– Gardez le lit!

Ծանոթություն. ա) ինչպես հայերենում, այնպես էլ ֆրանսերենում փոխվում է ենթակայի դեմքը, անցնելով առաջինից երկրորդ և երրորդ դեմքեր, ելնելով այն բանից, թե մեջբերվող խոսքով արտահայտված գործողության կատարողը խոսողն է, խոսակիցն է, թե մի երրորդ դեմք:

Օրինակներ.

1. Alice **me** dit: «**Tu** dois **te** reposer». 1. Alice **me** dit que **je** dois **me** reposer**.**
2. Alice **te** dit : «**Tu** dois **te** reposer». 2. Alice **te** dit que **tu** dois **te** reposer.
3. Alice **lui** dit: «**Tu** dois **te** reposer». 3. Alice **lui** dit qu'**il** doit **se** reposer.

բ) ի հակադրություն հայերենի, ֆրանսերենում ուղղակի խոսքից անուղղակիի փոխակերպման ժամանակ փոխվում է նաև մեջբերվող խոսքի բայի ժամանակները: Եթե գլխավոր նախադասության բայը որևէ անցյալ ժամանակով է, ապա ուղղակի խոսքի présent-ը փոխվում է

imparfait-ի, passé composé-ն՝ plus que parfait-ի, իսկ futur simple-ը՝ Conditionnel présent-ի (=futur dans le passé).

1. Il a demandé:

– Qui dort **maintenant**?

Il a demandé qui **dormait alors.**

2. Il demandait: « Est-ce qu'il est venu **aujourd'hui**?»

Il demandait s'il était venu **ce jour-là**.

3. Il voulait savoir: «Qu'est-ce qu'il **fera demain**?»

Il voulait savoir **ce qu**'il **ferait le lendemain**.

4. Le docteur a demandé à son patient: "Pourquoi n'êtes- vous pas venu **hier** à la consultation?"

Le docteur a demandé à son patient pourquoi il **n'était pas venu la veille** à la consultation.

Ծանոթություն. 1. Ֆրանսերենում տեղի են ունենում նաև հետևյալ փոփոխությունները.

aujourd'hui-ի փոխարեն գործածվում է **ce jour-là**, **hier**-ի փոխարեն՝ **la veille**, **demain**-ի փոխարեն՝ **le lendemain**, **maintenant**-ի փոխարեն՝ **alors**.

2. Ուղղակի խոսքի փոխակերպման ժամանակ հարցական նշան և չակերտներ չեն գործածվում:

ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆ
LE RÉGIME DES VERBES

acheter qch à qqn
achever de faire qch
admirer qn, qch
adorer qn, qch
adresser qch à qn
s'adresser à qn
aider qn à faire qch
aimer qn, qch; ~ + inf.
aller à
annoncer qch à qn
apercevoir qn, qch
applaudir qn
appeler qn
apporter qch à qn
apprendre qch à qn, ~ à qn à faire qch
arrêter qn, qch; ~ de+inf.
assister à qch
attendre qn, qch
avoir besoin de faire qch
avoir envie de faire qch
avoir honte de faire qch
avoir peur de faire qch
caresser qn
casser qch
causer avec qn
cesser de faire qch
chercher qn, qch
choisir qn, qch
profiter de qch
commencer qch; ~ à + inf.
interdire à qn de + inf.
s'intéresser à qn, à qch
inviter qn à + inf.
jouer à
jouer de
lancer qch à qn
se mettre à + inf.
obliger qn à faire qch
occuper qn, qch
s'occuper de qn, de qch
offrir qch à qn
orner qch de qch
ôter qch
oublier qn, qch, de + inf.
pardonner qch à qn; ~ à qn de + inf.
parler à qn
parler de qn, de qch
penser à qn, à qch; ~ faire qch
perdre qch
permettre qch à qn; ~ à qn de + inf.
préférer qch, ~ + inf.; ~ qch à qch
se préparer à faire qch
se présenter à qn
prier de faire qch
promettre qch à qn; ~ à qn de + inf.
proposer qch à qn; ~ à qn de + inf.
protéger qn, qch
quitter qn, qch
raconter qch à qn
ramasser qch
rappeler qch à qn; ~ qn
se rappeler qn, qch
réagir à qch
consentir à qch
consulter qn, qch
continuer qch; ~ à (de) + inf.
courir à qn
couvrir qch de qch
se couvrir de qch
critiquer qn, qch
croire qn, qch
décider de + inf.
défendre à qn de faire qch
demander qch à qn
dire qch à qn; ~ de + inf.
regarder qn, qch
se diriger vers
écouter qn, qch
écrire qch à qn
entendre qn, qch
entrer à, dans, en
empêcher qn de faire qch
envoyer qch à qn
éplucher qch

essayer de faire qch
être content de + inf.
être heureux de + inf.
être plein de qch
être prêt à faire qch
examiner qn, qch
expliquer qch à qn
faire attention à
finir qch; ~ de + inf.
grimper sur, dans
réfléchir à qch
refuser qch; ~ de faire qch
remercier qn; ~ de+inf.
remplacer qn, qch
remplir qch de qch
répondre à qn, à qch
ressembler à qn
réussir; ~ à faire qch; ~ qch
salir qch
servir à, de; ~ à + inf.
se servir de qch
souffrir de qch, de faire qch
se souvenir de qn, de qch; ~ de + inf.
s'habituer à qn, à qch; ~ à + inf.
s'intéresser à qn, à qch
tâcher de faire qch
téléphoner à qn
utiliser qch
visiter qch, qn
vouloir qch, + inf.
voir qn, qch

TABLEAU DE CONJUGAISON DES VERBES DU 3e GROUPE

INFINITIF	INDICATIF				CONDITIONNEL	SUBJONCTIF	IMPÉRATIF	PARTICIPE	
	Présent	Imparfait	Passé simple	Futur simple	Présent	Présent		Présent	Passé
aller (être)	je vais, tu vas il va, nous allons, vous allez, ils vont	j'allais	j'allai, nous allâmes	j'irai	J'irais	que j'aille, que nous allions, qu'ils aillent	va! allons! allez!	allant	allé
apercevoir[1]	j'aperçois, nous apercevons, ils aperçoivent	j'apercevais	j'aperçus	j'apercevrai	j'apercevrais	que j'aperçoive, que nous apercevions, qu'ils aperçoivent	aperçois! apercevons! apercevez!	apercevant	aperçu
s'asseoir	je m'assieds, il s'assied, nous n. asseyons, ils s'asseyent կամ je m'assois, il s'assoit, n.n. assoyons, ils s'assoient	je m'asseyais, nous nous asseyions կամ nous nous assoyions	je m'assis, nous nous assîmes	je m'assiérai, nous nous assiérons կամ je m'assoirai, nous nous assoirons	je m'assiérais, nous nous assiérions կամ je m'assoirais, nous nous assoirions	que je m'asseye, que nous n. asseyions կամ que je m'assoie, que nous nous assoyions	assieds-toi! asseyons-nous! asseyez-vous! կամ assois-toi! assoyons-nous! assoyez-vous!	s'asseyant	assis
atteindre[2]	j'atteins, il atteint, nous atteignons, ils atteignent	j'atteignais, il atteignait, nous atteignions, ils atteignaient	j'atteignis, il atteignit, nous atteignîmes, ils atteignirent	j'atteindrai, il atteindra, nous atteindrons, ils atteindraient	j'atteindrais, il atteindrait, nous atteindrions, ils atteindront	que j'atteigne, qu'il atteigne, que nous atteignions, qu' ils atteignent	atteins! atteignons! atteignez!	atteignant	atteint

attendre[3]	j'attends, il attend, nous attendons	j'attendais	j'attendis	j'attendrai	j'attendrais	que j'attende, que nous attendions	attends! attendons! attendez!	attendant	attendu
avoir	j'ai, tu as, il a, nous avons, vous avez, ils ont	j'avais	j'eus	j'aurai	j'aurais	que j'aie, que tu aies, qu'il ait, que nous ayons, que vous ayez, qu'ils aient	aie! ayons! ayez!	ayant	eu
battre[4]	je bats, nous battons	je battais	je battis	je battrai	je battrais	que je batte, que nous battions	bats! battons! battez!	battant	battu
boire	je bois, nous buvons, ils boivent	je buvais	je bus	je boirai	je boirais	que je boive, que nous buvions, qu'ils boivent	bois! buvons! buvez!	buvant	bu
conduire[5]	je conduis, nous conduisons	je conduisais	je conduisis	je conduirai	je conduirais	que je conduise	conduis! conduisons! conduisez!	conduisant	conduit
connaître[6]	je connais, nous connaissons	je connaissais	je connus	je connaîtrai	je connaîtrais	que je connaisse, que nous connaissions	connais! connaissons! connaissez!	connaissant	connu
coudre	je couds, nous cousons	je cousais	je cousus	je coudrai	je condrais	que je couse	couds! cousons! cousez!	cousant	cousu
courir	je cours, nous courons	je courais	je courus	je courrai	je courrais	que je coure	cours! courons! courez!	courant	couru
croire	je crois, nous croyons, ils croient	je croyais, nous croyions	je crus	je croirai	je croirais	que je croie, que nous croyions, qu'ils croient	crois! croyons! croyez!	croyant	cru
cueillir[7]	je cueille, nous cueillons	je cueillais	je cueillis	je cueillerai	je cueillerais	que je cueille	cueille! cueillons! cueillez!	cueillant	cueilli
devoir	je dois, nous devons, ils doivent	je devais	je dus	je devrai	je devrais	que je doive, que nous devions, qu'ils doivent		devant	dû

dire	je dis, nous disons, vous dites, ils disent	je disais	je dis, nous dîmes	je dirai	je dirais	que je dise	dis! disons! dites!	disant	dit
écrire[8]	j'écris, nous écrivons, ils écrivent	j'écrivais	j'écrivis	j'écrirai	j'écrirais	que j'écrive	écris! écrivons! écrivez!	écrivant	écrit
envoyer	j'envoie, nous envoyons, ils envoient	j'envoyais, nous envoyions	j'envoyai	j'enverrai	j'enverrais	que j'envoie, que nous envoyions, qu'ils envoient	envoie! envoyons! envoyez!	envoyant	envoyé
être	je suis, tu es, il est, nous sommes, vous êtes, ils sont	j'étais, nous étions	je fus,	je serai	je serais	que je sois, que nous soyons, qu'ils soient	sois! soyons! soyez!	étant	été
faire	je fais, nous faisons, vous faites, ils font	je faisais	je fis	je ferai	je ferais	que je fasse, que nous fassions	fais! faisons! faites!	faisant	fait
falloir	il faut	il fallait	il fallut	il faudra	il faudrait	qu'il faille	–	–	fallu
lire	je lis, nous lisons	je lisais	je lus	je lirai	je lirais	que je lise	lis! lisons! lisez!	lisant	lu
mettre[9]	je mets, nous mettons, ils mettent	je mettais	je mis	je mettrai	je mettrais	que je mette	mets! mettons! mettez!	mettant	mis
mourir	je meurs, nous mourons, ils meurent	je mourais	je mourus	je mourrai	je mourrais	que je meure, que nous mourions, qu'ils meurent	meurs! mourons! mourez!	mourant	mort
naître	je nais, il naît, nous naissons	je naissais	je naquis	je naîtrai	je naîtrais	que je naisse, que nous naissions	nais! naissons! naissez!	naissant	né

partir[11]	je pars, nous partons	je partais,	je partis	je partirai	je partirais	que je parte, que nous partions	pars! partons! partez!	partant	parti
plaire	je plais, il plaît, nous plaisons	je plaisais	je plus	je plairai	je plairais	que je plaise	plais! plaisons! plaisez!	plaisant	plu
pleuvoir	il pleut	il pleuvait	il plut	il pleuvra	il pleuvrait	qu'il pleuve	–	pleuvant	plu
pouvoir	je peux (je puis), nous pouvons, ils peuvent	je pouvais	je pus	je pourrai	je pourrais	que je puisse	–	pouvant	pu
prendre[12]	je prends, nous prenons, ils prennent	je prenais	je pris	je prendrai	je prendrais	que je prenne, que nous prenions, qu'ils prennent	prends! prenons! prenez!	prenant	pris
rire[13]	je ris, nous rions	je riais	je ris	je rirai	je rirais	que je rie, que nous riions	ris! rions! riez!	riant	ri
savoir	je sais, nous savons, ils savent	je savais	je sus	je saurai	je saurais	que je sache, que nous sachions	sache! sachons! sachez!	sachant	su
suivre	je suis, nous suivons, ils suivent	je suivais	je suivis	je suivrai	je suivrais	que je suive, que nous suivions	suis! suivons! suivez!	suivant	suivi
tenir[14]	je tiens, nous tenons, ils tiennent	je tenais	je tins, nous tînmes, vous tîntes, ils tinrent	je tiendrai	je tiendrais	que je tienne, que nous tenions, qu'ils tiennent	tiens! tenons! tenez!	tenant	tenu
venir[15] (être)	je viens, nous venons, ils viennent	je venais	je vins, nous vînmes, vous vîntes, ils vinrent	je viendrai	je viendrais	que je vienne, que nous venions, qu'ils viennent	viens! venons! venez!	venant	venu
vivre	je vis, nous vivons, ils vivent	je vivais	je vécus	je vivrai	je vivrais	que je vive	vis! vivons! vivez!	vivant	vécu

voir	Je vois, nous voyons, ils voient	je voyais	je vis	je verrai	je verrais	que je voie, que nous voyions	vois! voyons! voyez!	voyant	vu
vouloir	Je veux, nous voulons, ils veulent	je voulais	je voulus	je voudrai	je voudrais	que je veuille, que nous voulions, qu'ils veuillent	veuille! veuillons! veuillez!	voulant	voulu

1. De même: recevoir
2. De même: peindre, éteindre, craindre, plaindre, joindre
3. De même: défendre, descendre, entendre, mordre, pendre, rendre, répondre, tendre, vendre
4. De même: abattre, combattre
5. De même: construire, détruire, introduire, produire, traduire
6. De même: apparaître, disparaître, paraître
7. De même: recevoir
8. De même: décrire
9. De même: permettre, promettre, remettre
10. De même: couvrir, découvrir, offrir, souffrir
11. De même: dormir, sentir, servir, sortir
12. De même: apprendre, comprendre
13. De même: sourire
14. De même: appartenir, contenir, obtenir, retenir
15. De même: devenir, revenir, se souvenir

VOCABULAIRE FRANÇAIS-ARMÉNIEN

A

abbaye [abei] f – աբբայարան
aboiement m – հաչոց
aboyer – հաչալ
abricot m – ծիրան
absolu, **-e** – բացարձակ
absolument – անշուշտ, անպայման
abstrait, **-e** – վերացական
absurde – անհեթեթ
abusif, -ve – չափազանց, չափից դուրս
accès m – մուտք; avoir ~ մուտք ունենալ
accompagner qn – ուղեկցել
accord m – համաձայնություն être d'~ համաձայն լինել
accueillir – ընդունել, դիմավորել
accusé, **-e** – մեղադրյալ
achat m – գնում; faire des ~ գնումներ կատարել
acheminer – ուղղորդել, տանել
acheter qch à qn – գնել
acide – թթու
acier m – պողպատ
activité f – գործունեություն
actuellement – այժմ, ներկայումս
addition f – 1. գումարում 2. հաշիվ (ռեստորանում)
administratif, **–ve** – վարչական
admiration f – հիացմունք
admirer qn, qch – հիանալ
adolescent, **-e** m f – պատանի
adopter qn, qch – ընդունել
adorer qn, qch – պաշտել
adoucir – 1. քաղցրացնել 2. մեղմացնել
adresse f - հասցե
adresser (s') à qn – դիմել
adroit, -e - ճարպիկ, հնարամիտ
aérien, –ne – օդային
aéronautique f – օդանավաշինություն
affaire f – գործ
affamé, -e – քաղցած, սովահար
affectif, **–ve** – հուզական
affluent m – վտակ
affoler (s') – գլուխը կորցնել, դես ու դեն ընկնել, խենթանալ
âge m – տարիք
âgé, -e – տարեց, մեծահասակ
agence f – գործակալություն, ~ d'emploi աշխատանքի տեղավորման գործակալություն
agir – գործել; il s'agit de բանն այն է, որ
agiter – թափահարել
agneau m – գառ
agricole – գյուղատնտեսական
agriculture f – գյուղատնտեսություն
agrumes m pl. – ցիտրուսային բույսեր
aide f – օգնություն
aider qn à + inf. – օգնել
ail [aj] m – սխտոր
ailleurs - ուրիշ տեղ, այլուր
aimable – սիրալիր
ainsi – այսպես, այսպիսով
air m – 1. օդ 2. տեսք
ajourner qch – հետաձգել
ajouter qch – ավելացնել
alimentaire – սննդի, պարենային, մթերային
allée f – ծառուղի
allemand, -e – գերմանական
aller à – գնալ
allonger (s') –1. փռվել, տարածվել 2. պառկել
allumer qch – վառել
allure f – 1. քայլվածք 2. ընթացք, արագություն 3. կեցվածք, շարժուձև
altitude f – բարձրություն

amande f – նուշ
ambassade f – դեսպանություն
âme f – հոգի
ami, **-e** – բարեկամ; petit (e) ~ (e) սիրած տղա, սիրած աղջիկ; au besoin on connaît l'~ դժբախտության մեջ են ճանաչում իսկական բարեկամին
amitié f – բարեկամություն; les petits cadeaux entretiennent l'amitié փոքրիկ նվերները բարեկամության պահպանման գրավականն են
amuser qn – զվարճացնել s'~ զվարճանալ
an m – տարի
année f – տարի, թվական
ancêtre m – նախնի
ancien, **–ne** – 1. հին 2. նախկին
âne m – էշ
animal m – կենդանի
animé, **-e** – աշխույժ, բանուկ
année f – տարի
annoncer qch à qn – հայտարարել
annuel, – le - տարեկան, ամենամյա
antique – հին
apercevoir qn, qch – նկատել
apparaître – հայտնվել
appareil m – սարք, ապարատ
appartement m – բնակարան
appeler qn – 1. կանչել 2. կոչել 3. զանգահարել; s'~ կոչվել, անվանվել
appétit m – ախորժակ
applaudir qn – ծափահարել
application f – ջանասիրություն
apprécier – գնահատել
apprendre qch – 1. սովորել 2. տեղեկանալ, իմանալ 3.~ qch à qn, ~ à qn à + inf. սովորեցնել
approcher – 1. մոտենալ 2. qch de qch մոտեցնել; s'~ de մոտենալ
après – հետո; d'~ ըստ; après–demain վաղը չէ մյուս օրը
arbitre m – մրցավար
arbuste m - փոքրիկ թուփ, թփիկ
arche f de Noé – Նոյան տապան
argent m – 1. փող 2. արծաթ; jeter l'~ par les fenêtres փողը վատնել, մսխել
argumenter–փաստարկել, փաստարկներ բերել
armoire f – պահարան, զգեստապահարան
arôme (arome) m – բույր, բուրմունք
arrêter (s') – կանգնել, կանգ առնել
arrivée f – գալը, ժամանելը, հասնելը
arriver – 1. ժամանել, գալ, հասնել 2. պատահել 3. ~ à + inf. կարողանալ
arrondi, **-e** – կլորացած
arroser – ջրել, ոռոգել
arrosoir m – ցնցուղ
artère f – 1. զարկերակ 2. մայրուղի
artificiel, **-elle** – արհեստական
ascenseur m – վերելակ; prendre l'~ վերելակ նստել; monter en ~ վերելակով բարձրանալ
aspirateur m – փոշեկուլ; passer l'~ փոշեկուլով մաքրել
assaillir – հարձակվել, գրոհել
astronomique – աստղագիտական
assurer qch à qn – վստահեցնել
attacher qch – կապել
attendre qn, qch – սպասել
attirer qn – հրապուրել, գրավել
attraper – բռնել, որսալ
auberge de la jeunesse – հյուրանոց, տուրբազա
aubergine f – սմբուկ
autant – այդքան
auteur m – հեղինակ
autoévaluer – ինքն իրեն գնահատել
autoritaire – ազդու, տիրական
autorité f – հեղինակություն; իշխանություն

autrefois – առաջ, անցյալում
avancer (s') – առաջանալ, առաջ գնալ
avantage m – օգուտ, առավելություն
avenir m – ապագա
aventurier m – արկածախնդիր
avenue f – պողոտա
avion m – ինքնաթիռ
avis m – կարծիք
avocat m – փաստաբան

B

baccalauréat (bac) m – բակալավր
bagage m – ուղեբեռ
bague f – մատանի
baguette f – 1. ձեռնափայտ 2. հացի տեսակ
baigner – ողողել; se ~ լողանալ
baigneur, **-euse** m f – լողացող
baignoire f – լոգարան, վաննա
bâiller – հորանջել
bain m –1. լոգանք 2. բաղնիք; salle f de ~s լոգարան; prendre un ~ լոգանք ընդունել; prendre un ~ de soleil – արևի լոգանք ընդունել
bande f – կապ, ժապավեն
banlieue f – արվարձան
barbu, -e – մորուքավոր
barque f – մակույկ, նավակ
bas m – գուլպաներ
bas, **-se** – ցածր
base f – հիմք; de ~ հիմնական
basilic m – ռեհան
basse–cour f – թռչնանոց
bateau m – նավ
bâtir – կառուցել
battre qn – ծեծել 2. բաբախել; se ~ կռվել
bavarder – շատախոսել
beau–frère m – փեսա (քրոջ ամուսինը); տագր, աներորդի
beau–père m – սկեսրայր; աներ
beauté f – գեղեցկություն
bêche f – բահ
beignet m – փքաբլիթ
bêler – մկկալ, մայել
belle–mère f – սկեսուր; զոքանչ
belle–sœur f – հարս (եղբոր կինը); տալ, քենի
bercer – օրորել
berger, **–ère** m f – հովիվ
besoin m – կարիք; avoir ~ de կարիք ունենալ; au ~ on connaît l'ami դժբախտության մեջ են ճանաչում իսկական բարեկամին
bétail m – անասուններ
bête f – կենդանի, անասուն, գազան
bête - հիմար
bêtise f – հիմարություն
betterave f – ճակնդեղ
beurre m – կարագ
bible f – աստվածաշունչ
bien–être m – բարեկեցություն
bière f – գարեջուր
bijouterie f – ոսկերչական իրերի խանութ
bijoutier m – ոսկերիչ
bille f – գնդիկ
blanc, blanche – սպիտակ
blanchir – սպիտակել; սպիտակեցնել
blé m – ցորեն; battre le ~ ցորենը կալսել
blesser – վիրավորել, նեղացնել
blond, **-e** – շիկահեր, խարտյաշ
bœuf m – եզ
Bohémien, **–ne** m f – գնչու
boire qch – խմել
bois m – 1. անտառ 2. փայտ
boisé, **-e** – անտառապատ
boisson f – խմիչք

boîte f – տուփ; ~ aux (à) lettres – փոստարկղ
bon, **–ne** – 1. լավ 2. բարի 3. համեղ
bonbon m – կոնֆետ
bonheur m – երջանկություն
botte f – կապ (կանաչու)
boucherie f – մսի խանութ
bouclé – գանգուր
bouffe f – ուտելիք
bouillabaisse f – ձկնապուր
boulot m – գործ, աշխատանք
boutique f – խանութ
branche f – 1. ճյուղ 2. կոթ (ակնոցի)
brebis f – ոչխար
brevet m– վկայական
brillant, **-e** – փայլուն
briller – փայլել
brique f – աղյուս
brosse f – խոզանակ; ~ à dents ատամի խոզանակ
brouette f – ձեռնասայլակ
bruit m – աղմուկ; faire du ~
brouillard m - մշուշ, մառախուղ
brûlant, **-e** – կիզիչ, այրող
brumeux, **-euse** – մառախլապատ
brun, **-e** – թուխ, թխահեր
brusquement – հանկարծակի
bruyant, **-e** – աղմկոտ
bûcheron m – փայտահատ
bureau m – 1. գրասենյակ 2. գրասեղան; ~ de poste փոստի բաժանմունք
bus [bys] m – ավտոբուս
but m – նպատակ; dans le ~ de նպատակով

C

cacher qch – թաքցնել
cadeau m – նվեր
calme – հանգիստ, հանդարտ
calvados [kalvados] m – խնձորօղի
campeur m – զբոսաշրջիկ
camping [kãpiŋ] faire du ~ – հանգիստն անցկացնել ճամփորդությամբ՝ վրանի տակ
canapé m – բազմոց
candidat m – թեկնածու
canot m – մակույկ
cantatrice f – օպերային երգչուհի
cantine f – ճաշարան, բուֆետ
caqueter – կռթկրթալ, կչկչալ
carnet m de notes – օրագիր
carotte f – ստեպղին, գազար
carpe f – ծածան
carré, **-e** – քառակուսի
carrière f – գործունեություն, կարիերա
cassette f – 1. արկղիկ, զարդատուփ 2. ձայներիզ
cassoulet m – կերակրատեսակ (սպիտակ լոբով և սագի, բադի, խոզի կամ ոչխարի մսով)
catastrophe f – աղետ
cathédrale f – մայր տաճար
cause f – պատճառ; à ~ de պատճառով
causer – պատճառել
causer – զրուցել
cave f – նկուղ
ceinture f – գոտի
célèbre – հայտնի
célébrer – տոնել, նշել
célibataire m f – ամուրի
cendre f – մոխիր
cendrier m – մոխրաման
cercle m – շրջանակ, շրջան
céréale f – հացահատիկ
cerise f – կեռաս
certain, **-e** – 1. ստույգ, հավաստի 2. հաստատ, որոշակի
certificat m – 1. վկայական 2. տեղեկանք

cerveau m – ուղեղ
cesser qch, de + inf. – դադարել, դադարեցնել
chacun, **-e** – յուրաքանչյուրը
chaîne f – 1. շղթա 2. լեռնաշղթա
chaleur f – շոգ
champ m – դաշտ
changer de – 1. փոխել 2. փոխվել
chaque – յուրաքանչյուր
charcuterie f – երշիկեղենի խանութ
charme m – հմայք
charmer qn – հմայել, գերել, հրապուրել
charrue f – գութան
châtain, **-e** – շագանականեր
chauffage m – ջեռուցում
chauffe–bain m – ջրատաքացուցիչ
chauffer – տաքացնել; se ~ տաքանալ
chaussettes f – կիսագուլպա
chaussures f – կոշիկ
chef m – ղեկավար
chef–d'œuvre m – գլուխգործոց
chemin m – ճանապարհ
cheminée f – 1. բուխարի 2. ծխնելույզ
chemise f – վերնաշապիկ
chemisier m – կանացի վերնաշապիկ
chêne m–կաղնի
cher [ʃɛr], **chère** – սիրելի, թանկագին
chercher qn, qch – փնտրել
cheval m – ձի; monter à ~ ձի նստել
cheveux m pl. – մազեր
chez–soi m – տուն, բնակարան
chiche – այդ էր պակաս
chic – հոյակապ, հիանալի
choc m – ցնցում
chocolat m – 1. շոկոլադ 2. կակաո
choisir – ընտրել
chômage m – գործազրկություն
choucroute f – կերակրատեսակ (թթու կաղամբով և նրբերշիկով)
chouette – հիանալի
chou–fleur m – ծաղկակաղամբ
chrétien, **–ne** – 1. քրիստոնեական 2. (m, f) քրիստոնյա
ci–contre – դիմացը
cidre m – խնձորոզի
ciel m – երկինք
cigogne f – արագիլ
cime f – գագաթ, կատար
circonstance f – հանգամանք
civilisation f – քաղաքակրթություն, մշակույթ
clair, **-e** – լուսավոր
cloche f - զանգ, զանգակ
cochon m – խոզ
code m **civil** – քաղաքացիական օրենսգիրք
cœur m – սիրտ
coiffé, **-e** – սանրված
coiffeur, **-euse** m f – վարսավիր
coin m – անկյուն; au ~ de անկյունում
collant m – զուգագուլպա
collègue m f – գործընկեր
collier m – մանյակ
colline f – բլուր
colonie f **de vacances** – ճամբար
colonne f – սյունակ
colorer – ներկել
combat m – մարտ, կռիվ
